ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Մենք նստած ենք Նադո Մահմուդովի տանը: Մեր բանաստեղծներ՝ Ավետիք Իսահակյանը, Նաիրի Զարյանը և ես: Ընկերը ազգով քուրդ է և այժմ պարտիական քարտուղար է Հոկտեմբերյան ռայոնում:

Հոկտեմբերյան՝ դա այժմյան սովետական անունն է: Նախկինը Սարդարապատ էր:

Ռայոնում բավական թվով քուրդ բնակչություն կա: Եվ իհարկե այդ չէ պատճառը, որ Նադոն վերցրել է մի այդպիսի պատասխանատու պարտականություն՝ աշխատել այդ մեծահարուստ ռայոնում: Նա եռանդուն, նվիրված և գիտակից մարդ է, նրան սիրում են բոլորը՝ թե՛ հայերը և թե՛ քրդերը:

Նադոն հրաշալի տիրապետում է հայերենին, գիտե մեր ժողովրդի պատմությունը, գիտե և սիրում է հայ կլասիկներին, շատ լավ գիտե և նորերին: Շարունակ ցիտատներ է բերում Ռաֆֆուց, Պռոշյանից, Աբովյանից, Պետրոս Դուրյանից, երգում է հայ ժողովրդական բոլոր հին ու նոր երգերը:

«Մեզ կոտորեցին անիծածները»…

1915 թվի դեպքերի մասին է ակնարկում[1] և երբ «մեզ» է ասում՝ դա հասարակ լապսուս չէ: Նադոն այնքան է ապրել հայ ժողովրդի մեջ և այնքան է սիրում նրան, որ այդ «մեզ» խոսքը նրա հոգեբանությունից է գալիս: Երբ նա սովորում էր Թբիլիսիի բարձրագույն պարտիական դպրոցում՝ նա եռանդով մի անգամ պաշտպանեց Ավետիք Իսահակյանին… Հայ ուսանողներից մեկի դեմ:

Սակայն Նադոն մեծ հայրենասեր է իր հարազատ քուրդ ժողովրդի հանդեպ: Նա սիրում է իր ժողովուրդը, գիտե նրա ֆոլկլորը, երազում է նրա կուլտուրական վերածնությունը, ուշադիր է նրա ամեն մի առաջադիմական քայլին:

Նադոն իր անձով և հատկություններով հայ-քուրդ ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրության կատարյալ օրինակն է:

Եվ բնական, օրգանական, հաստատ:

Զրուցում ենք:

Բայց որտե՞ղ ենք նստած: Այն տունը, որ այս րոպեիս նստած ենք մենք, չէր կարող կանգնած լինել այս տեղում, եթե չլիներ սովետական իշխանությունը:

Հենց ի՛սկ այս տեղում…

Եվ հենց իսկ այս մասին է բարձրաձայն խորհում մեր բանաստեղծը՝ Ավետիք Իսահակյանը, «Աբու-լալա-Մահարի» արաբական պոեմի հեղինակը:

— Այս տեղը, ուր մենք նստած ենք՝ նախկինում անապատ էր: Այնտեղ, ուր մենք հիմա նստած ենք՝ ուղտեր էին արածում: Եվ ինչպե՞ս: Թուրք ուղտապանները յուղում էին իրենց ուղտերը և ազատ բաց էին թողնում այս անապատը արածելու: Ոչ ոք նրանց ձեռ չէր տալիս: Եվ ոչ ոք էլ չկար… Աղուտներ էին այստեղ և տատասկներ: Ամայի էր, չոր ու տխուր: Առաջին գաղափարս անապատի մասին այստեղից եմ ստացել: «Աբու-լալա-Մահարի» պոեմս այս անապատն է տվել ինձ: Բայց հիմա, երբ ես տեսնում եմ, թե ինչ է դառել այս անապատը՝ ես լցվում եմ զարմանքով և հպարտությամբ:

Այս խոհերը միևնույն մտքերն են զարթեցնում նաև իմ մեջ: Հիշում եմ իմ «Լենկթեմուր» պոեմից իմ տողերը:

Ահա նա՝ փռված անհույս ու տխուր,

Դեղին՝ մահի պես, շիրիմ մշտալուռ…[2]

Սարդարապատի անապատի մասին է…

Նադոյի տան պատուհաններից երևում են շենքեր, փողոցներ, այգիներ, բանջարանոցներ… Իսկ այնտեղ, հեռվում բամբակի լայնարձակ դաշտերն են:

Աղմկում է Հոկտեմբերյանը առավոտյան թարմությամբ: Օդը լի է շչակների, մեքենաների, ավտոների հնչյուններով: Ամեն կողմից մարդկային խոսակցություն, ծիծաղի ձայներ, երեխաների ճիչեր:

Չկա այլևս Սարդարապատը: Նա անհետացել է: Նա պատմություն է այլևս: Անապատի պատմություն:

Գոյություն ունի այժմ միայն Հոկտեմբերյանը: Ծաղկուն, հարուստ, կարևոր ռայոն Հոկտեմբերյանը: Սովետականը:

Մենք այս րոպեիս գտնվում ենք ռայոնի կենտրոնում, որին շրջապատում են վեց ընդարձակ սովխոզներ, բազմաթիվ կոլխոզներ, որոնց մեջ դղրդում և որոտում է իր ուժից բամբակազտիչ գործարանը[3]:

Մենք խիտ բնակեցրած կետումն ենք:

Գնում են բամբակազտիչ գործարանը: Բամբակը բարձր կիտած ձյունակույտերի նման կանգնած է բակերում: Նա առատ է և ներշնչող: Նա հավաքված է հազարավոր եռանդուն, համառ և պայքարող ձեռքերով: Հազարավոր կանայք, աղջիկներ, հասակավոր մարդիկ գրոհի են նետվել այս տարի և պատերազմ գնացած երիտասարդների տեղ աշխատել են, նրանց լիովին փոխարինել են և ահա պտուղը՝ բամբակի այս ահագին շերտերը: Շատ կանայք և աղջիկներ կան գործարանում: Նրանք տղամարդու պես կռվում են և նվաճում բամբակը: Հոկտեմբերյանի բամբակազտիչը կարևոր մատակարարն է պետական պահանջների: Նա մեծ օժանդակ է այս րոպեիս վառվող պատերազմի կարիքների մեջ:

Բոլորն շտապում են՝ բանվորներն ու բանվորուհիները: Ասենք մեքենաներն իրենք շտապեցնում են… Այս շտապանքը իր կարող մեքենաների զարկերով համահնչյուն է այն դղրդոցին և շտապանքին, որով վառվում է այս րոպեիս պատերազմը: Այնտեղ ևս շտապում են ազատագրել մարդկությունը, ջախջախել համաշխարհային գազանին՝ ֆաշիզմին:

Դաշտերում պայքար է մղվում:

Կանայք, այդ տիրուհիները բամբակի ցանքսերի, այգիների, բանջարանոցների և բոլոր կոլխոզական, սովխոզական հարստությունների— թեժ աշխատանքի մեջ են: Կինը պատմական ֆիգուրաէ դառնում մեծ Հայրենական այս պատերազմում: Նա անճանաչելի է այս րոպեիս: Սովետական կնոջ այն ակտիվությունը, որ նա ցույց էր տալիս խաղաղ ժամանակ, մի տեսակ ստվերի մեջ է մնացել այս րոպեիս նրա հերոսական նոր թափի հանդեպ: Կինը պատերազմում է այժմ:

Ավտոն եռանդուն օրորվում է սայլուղիներում: Ամեն կողմից մեզ շրջապատում են դաշտերը, բամբակը: Այս րոպեիս գրոհի են գնում բամբակահավաքի բոլոր դժվարությունների մեջ: Անձրևային օրեր են, ձեռքը պակաս է: Պետք է ամեն ինչ հաղթահարել մի տեսակ հնարագիտությամբ: Բամբակը թրջվում է,— պետք է չորացնել, տղամարդիկ դուրսն են,— պետք է նրանց փոխարինել լրիվ չափով: Սա էլ ռազմաճակատ է: Եվ ահա դաշտն են բերվում բացի հասակավոր կանանցից նաև երեխաները, աղջիկները: Դժվարություններ, այնուամենայնիվ, կան: Եվ հայ կինը— այդ պատմությունից հայտնի է— համառորեն կուրծքը դեմ տալով միշտ հաղթահարում է ամեն դժվարություն: Աշխատանքը հայ կնոջ զենքն է եղել հնում՝ դիմադրելու նվաճողների ոչնչացնող արշավանքներին, հիմա էլ երբ պատմությունը կրկնվել է՝ հայ կինը դուրս է եկել կռվելու…

Բայց ահա մի դատարկ լայն տարածություն և… մի տրակտորիստուհի՛. . . ինչու՞ է նա մենակ: Ո՞ւր են ուրիշները: Եվ մտածում ես ակամա թե դաշտը լքված է և գործը թողնված է մի հոգու…

Բայց խնդիրը պարզվում է իսկույն ևեթ:

Տրակտորիստուհին ռայոնում հայտնի կոլխոզնիկուհի է՝ Հռիփսիմե Ազատյանը: Նա իր վրա է վերցրել հերկելու մի ամբողջ հողամաս: Նա կարող է գործը գլուխ բերել և բերում է՛լ է: Տրակտորը դողում է նրա տակին, ինչպես մարտական նժույգը քաջարի մարտիկի տակին: Ահա թե ինչու է նա մենակ: Նրա կերպարանքը— դա մի գեղեցիկ պատկեր է: Առողջ, եռանդուն, ուրախ ու համարձակ: Ամբողջովին

կյանք է ու կամք: Իսկական սևահող: Պերճախոս նկարագրության փոխարեն Հռիփսիմեի գործը կարող է պարզել մեզ նրա ցուցանիշները:

Նախատեսնված 190 հեկտար փափուկ հողի վարի փոխարեն նա վարել է 580 հեկտար:

Խնայել է 1425 կիլոգրամ վառելանյութ:

Խնայել է 800 ռուբլու արժեքի մեքենայի մասեր:

Ինքնուրույն աշխատում է ունիվերսալ մեքենայի վրա:

Պարգևատրված է 55 աշխօրով և 200 ռուբլով՝ գերազանց աշխատանքի համար:

Ահա կանգնած է նա իբրև մի բրոնզե ֆիգուրա հին վարպետների ձուլած: Կարծես նա այն հողից է դուրս եկել: Հողի բույր է գալիս նրա ջլապինդ ձեռքերից, ամուր ոտներից, նրա սև աչքերից, նրա հայացքից՝ հանգիստ, ինքնավստահ, աշխույժ:

Հայաստանի հողն է նրան ծնել իր իսկ պատկերի համանման: Հռիփսիմեն Հայաստանի հողն է… Այդ հողի մեջ է և Հայաստանի կնոջ ուժը: Հողը ծնել է այդպիսի կանայք, որպեսզի նրանք գնահատեն, մշակեն իրան, պաշտպանեն իրան:

Եվ Հռիփսիմեն պաշտպանում է իր մայրենի հողը, ինչպես իր մորը, ծնողին:

Հռիփսիմեի եղբայրն այս րոպեիս կռվում է ֆաշիզմի դեմ: Նա դաշտում թողել է իր տրակտորը և գնացել է ջախջախելու այդ հողի թշնամուն, այսինքն՝ այդ հողի զավակների թշնամուն, և ահա Հռիփսիմեն ձեռն է առել տրակտորի կոթը: Եվ աշխատում է, տալիս է ցուցանիշներ երկու անգամ ավելի նախատեսված պլանից:

Բայց Հռիփսիմեն մենակ չէ Արարատյան դաշտում… Նրան շրջապատում են հազարավոր կանայք: Աշխատասեր, անձնուրաց կանայք:

Հոգնածությունը հաղթահարում է ինձ, և ես քնում եմ ավտոյի մեջ: Հանկարծ զարթնում եմ մի իսկական ճռվողյունից, կարծես ընկել եմ ինչ-որ մի թռչնանոց: Ի՞նչ բան է սա: Մեր ավտոն կանգ է առել, և նրա մոտ խմբվել են դպրոցականներ՝ աղջիկ ու տղա, իրենց ուսուցիչ-ուսուցչուհիների հետ: Դրանք Մեծ Շահրիար գյուղից են, եկել են բամբակաքաղի:

Աշխատանքը պայծառացրել է նրանց դեմքերը: Աչքերը նայում են զվարթ, աշխույժ: Գեղեցիկ են մեր երեխաները: Ազատությունը և աշխատանքը կրթության հետ փոխել են մեր գյուղի երեխաների տիպը— նրանք բարեձև են, առողջ և շնորհալի:

Ավետիք Իսահակյանն ու Նաիրի Զարյանը խոսում են բամբակ հավաքող երեխաների հետ: Նրանք տալիս են իրենց ցուցանիշները: Հասակավորների հավասար աշխօր ունեցող կա նրանց մեջ: Սիրանույշ Պապյանը քաղում է օրական 120 կիլո բամբակ, Աննիկ Խաչատրյանը՝ նույնքան:

Երեխաներին երգել ենք տալիս: Դաշտը լցվում է մանկական թովիչ ու պարզ երգի հնչյուններով: Մենք հրաժեշտ ենք տալիս փոքրիկ թիկունքայիններին, և ավտոն հանգիստ գնում է առաջ:

Խաղաղ են դաշտերը, կարծես ոչինչ չկա, որ նրան վրդովի: Սակայն դա ըստ երևույթին է. դաշտը լարված է մինչև ծայր աստիճան:

Դաշտն զգում է պատերազմը…

Ահա օդում բզզաց սև պողպատյա բզեզը: Անախորժ մտապատկերներ: Թշնամի: Ֆաշիզմ:

Եվ վազում ես… աշխատանքի:

Դա մենակ կօգնի մեզ ազատվելու այս կոշմարային բզեզներից:

Ահա երեք ինքնաթիռ ճեղքում են օդը: Նրանք անհանգիստ են, մռայլ ու սպառնալի: Նրանք պատրաստ ունեն մահը, որ հասցնեն թշնամուն:

Եվ նրանց տակին, գետնի վրա աշխատում է հայ կինը: Գլուխը կախ, ինտենսիվ, համառ և իմաստուն:

Այս կինը կհաղթի— հավատում ես դրան: Դրան ապացույց Հռիփսիմե Ազատյանը:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

(Էջ 182)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Դատելով բովանդակությունից գրված է Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945):

ԳԱԹ ԴՖ N 283 պահվում է մեկ ինքնագիր:

Տպագրվում է առաջին անգամ:

1 Նկատի ունի 1915 թ. ապրիլի 24-ի մեծ եղեռնը, երբ ԱրևմտյանՀայաստանի բնակչությունը զոհ դարձավ թուրքական ռեակցիոն կառավարության արյունռուշտ քաղաքականության:

2 Դ. Դեմիրճյան, Երկեր, հ. 1, էջ 146:

3 Նկատի ունի Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանը, որի շինարարությունը սկսվել է 1924 թ. հունիսին և ավարտվել 1925 թ. աշնանը: